ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Մեր երկրի **աշխարհագրական դիրքի նպաստավոր և ոչ նպաստավոր կողմերի իմացությունը և պետական կառավարման ընթացքում դրանց խելամիտ հաշվառումն անհրաժեշտ պայմաններ են հայրենիքի հզորացման ու անկախության ամրապնդման համար:**

Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի գլխավոր առանձնահատկությունները



Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից առանձնացնենք մի քանիսը.

1. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է **կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների** (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) **խաչմերուկում**: Նրա տարածքով անցնում են Թուրքիան Իրանին, Ադրբեջանին ու Կասպից ծովի ավազանին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը և Սև ծովը Իրանին ու արաբական երկրներին կապող երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր ճանապարհները:

2. Հարավային Կովկասով (և Հայաստանով) է անցնում Հարավարևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհը, որը միջնադարի հռչակավոր «Մետաքսի ճանապարհի» օրինակով ստացել է **«Մետաքսի նոր ճանապարհ»** անունը: Դրա զարգացմամբ շահագրգռված են ոչ միայն տարածաշրջանի երկրները, այլև ԱՄՆ-ը և Արևմուտքի մյուս խոշոր տերությունները:

3. Հայաստանը գտնվում է **արևմտյան (եվրոպական), արևելյան (իսլամական) և սլավոնական** քաղաքակրթությունների փոխազդեցության գոտում:

4. Ելք չունի դեպի ծովերն ու օվկիանոսները (ուղղակիորեն չի կարող օգտվել դրանց հաղորդակցության ուղիներից և բնական հարստություններից):

5. Հեռու է ընկած աշխարհի բարձր զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից:

6. Մոտ է գտնվում Պարսից ծոցի և Կասպից ծովի նավթագազաբեր ավազաններին, բնական տարբեր ռեսուրսներով հարուստ Ռուսաստանին և Իրանին:

7. Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական **շահերի բախման** տարածաշրջանում, որը հայտնի է **իր քաղաքական անկայունությամբ**:

8. Ռազմավարական գլխավոր դաշնակցին՝ Ռուսաստանի Դաշնության հետ չունի անմիջական սահման:

ՀՀ ներկա տնտեսաաշխարհագրական դիրքը (ՏԱԴ) բնութագրելիս և գնահատելիս պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Այդ դիրքը բնութագրող տնտեսաաշխարհագրական օբյեկտները՝ երկաթուղիները, ավտոխճուղիները, նավահանգիստները, նավթամուղերն ու գազամուղները, էլեկտրահաղորդման գծերը, հզոր արտադրական կենտրոնները, **եղել են նաև մինչև ՀՀ-ի անկախացումը**: Դրանք ծառայել են Հայաստանին և նրա տնտեսաաշխարհագրական դիրքը դարձրել նպաստավոր: Անկախացումից հետո էլ տվյալ կառույցները շարունակում են իրենց գոյությունը, զարգանում և կառուցվում են նորերը: **Սակայն ներկա պայմաններում Հայաստանի Հանրապետությունը չի օգտվում դրանց մեծ մասից, որի** պատճառով նրա տնտեսաաշխարհագրական դիրքը գնահատվում է ոչ նպաստավոր: Պատճառն այն է, որ գերակա նշանակություն է ձեռք բերել քաղաքաաշխարհագրական գործոնը:

Հայաստանի Հանրապետության ՏԱԴ-ի վատթարացմանը նպաստում է նաև վրաց-աբխազական շարունակվող հակամարտությունը: Այդ պատճառով չի գործում Վրաստանը Աբխազիային ու Ռուսաստանին կապող երկաթուղին, որից նախկինում օգտվում էր նաև Հայաստանը:

Այլ երկրների նման ՀՀ-ի ՏԱԴ-ը նույնպես ժամանակի ընթացքում կարող է ենթարկվել փոփոխության, նրա ոչ նպաստավոր հատկանիշները կարող են դառնալ նպաստավոր: Այսպես, հետագայում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամական քաղաքականությունից հրաժարումը, նրա շրջափակման վերացումը, ղարաբաղյան հարցի խաղաղ լուծումը կարող են արմատապես փոխել քաղաքական իրադրությունն ամբողջ Հարավային Կովկասում, վերջ դնել ազգամիջյան թշնամանքին և հաստատել կայուն խաղաղություն: Դա թույլ կտա **լիովին օգտագործել Հայաստանի և նրա հարևան երկրների տնտեսաաշխարհագրական դիրքի հնարավորությունները**, դրանք ծառայեցնել խաղաղության հաստատմանը և տարածաշրջանի բոլոր ժողովուրդների բարգավաճմանը: